Ներկա հոդվածում նկարագրված են այդ գրքերից 30-ը, որոնք բոլորովին չկան մեր մատենագիտական աշխատություններում[2] և որոնց պարունակած փաստական նյութը դուրս է մնացել հայ հին տպագրությանը նվիրված աշխատություններից[3]։

Հայտնաբերված հնատիպ գրքերի մեջ կան Ոսկան Երևանցու և նրա աշակերտների, ինչպես և Վանանդեցիների տպագրությունները (17-րդ դար և 18-ի սկիզբը, Ամստերդամ, Մարսել, Լիվոռնո), Կոստանդնուպոլսի տպագրիչներից՝ Աստվածատրյան, Սարգսյան, Պետրոսյան և այլ տպագրություններ, ինչպես և Ռուսաստանի ու Հնդկաստանի տպարաններից դուրս եկած հնատիպ գրքեր։ Նկարագրված գրքերը իրենց գոյության փաստով, հիշատակարաններում ու անվանաթերթերում պարունակած տեղեկություններով մի շարք հետաքրքրական ճշտումներ ու լրացումներ են մտցնում հայ հին տպագրության պատմության և մատենագիտության մեջ։

Ստորև տրվում են այդ գրքերի նկարագրությունները՝ անհրաժեշտ ծանոթություններով[4]։

ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑՈՒ, ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՎԱՆԱՆԴԵՑԻՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՏՕՆԱՅՈՅՑ։ Ամստերդամ, տպ. Ոսկան Երևանցու, 1669, 273 էջ, պատկերներով ու զարդերով։ Մատենադարան, № 60, 61, Պատմության թանգարան, № 298։

Անվանաթերթ՝ Տօնացոյց տէրունական տօնից. Նաև ամենայն սրբոց ըստ պատշաճի աւուրց։ Զոր եդեալ է և սահմանեալ սրբոյն Խաչակայ հայրապետի ըստ արարողութեանցն հայկազնեայց։ Ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ Կաթուղիկոսի Սրբոյ էջմիածնի։ Ծախիմ և սրբագրութեամբ Ոսկանայ վարդապետի և Արքի Եպիսկոպոսի Երևանեցւոյ։ Յամսթէլօտամում։ Ի թուոյ Փրկչին 1669։

Ունի հիշատակարան 271—273 էջերում, ուր կարդում ենք «Ես նուաստս անձնս բանի սպասաւոր տէր Ոսկան երկրէն արարատու ի քաղաքէն Երևանայ. տեսանելով իմ զպակասութիւն ազգին մերոյ հայկազնեայց ի կողմանէ ամենից գրոց. յաւետ հարկաւորաց և կարևորապէս պիտանացուաց. զորս ի բազմաց զսակաւս յոգոմբք աշխատանօք և յոլովիւք ծախիւք տպագրեցաք մինչև

---

2 Խոսքը վերաբերում է հնատիպ գրքերի Գ. Զարբհանալյանի կողմից կազմված երկու ցուցակներին (1883, 1895), նույն հեղինակի «Հայկական մատենագիտությանը» և Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտությանը», ինչպես և սրանց հիման վրա կազմված մի շարք ցանկերին և ուղեցույցներին։

3 Նկատի ունենք նախ Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայկական տպագրության ուսումնասիրությունը, Լեոյի «Հայկական տպագրությունը» և «Հայ գրքի տոնը», Վ. Զարդարյանի «Հիշատակաբանը», Թեոդիկի «Տիպ ու տառը» և Գ. Լևոնյանի «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունը, ինչպես և մի քանի ուրիշ գրքույկներ ու հոդվածներ։

4 Յուրաքանչյուր գրքի անվանման դիմաց նշված է այն գրապահոցը, ուր գտնվում է գիրքը, այսպես՝ Մատենադարան, № 60 կնշանակի, որ գիրքը գտնվում է Մատենադարանի հնատիպերի ֆոնդում 60 համարի տակ, նույնը և՝ Հանրային գրադարան, № 1052 կամ Պատմության թանգարան, № 298։

Նկարագրություններում անվանաթերթերից և հիշատակարաններից բերված հատվածների մեջ կրճատումները բացված են, բայց ուղղագրությունը և կետադրությունը պահպանված է։